

վասն զի բոլորը թողուկը սուգի նշան է։ Մօրուքնին շատ քիչ է, ինչպէս առաջ ալ ըսինք, և իրենք չեն կրնար ածիւ լել, այլ սափրիչը։ Սափրիներուն պարտքն է պտըտիլ փողոցներուն մէջ, դաւազանի մը ծայրը զարկած իրենց ծրարը, և մէկ աթոռակ մը. թէ որ հանդիպին մէկու մը որ պէտք ունենայ ածիլուելու՝ կը նստեցնեն այն աթոռակին վրայ ճամբուն մէջ, և կը կատարեն իրենց պաշտօնը։

Ընդհանրապէս Զինուհիք սպիտակագոյն են, և Եւրոպացւոց աչքին ալ ախորժելի կ'ըլլային, թէ որ կարմիր ճերմակ և այլ գոյներով երեսնին չայլայէին. մանկամարդք յօնքերնին կը կտրեն. ներքին բաճկոնակ չեն հագնիր, և կը թողուն որ մարմիննին արձակ համարձակ ընդլայնի. այս սովորութիւնս թէ իրենց նորածին որդւոցը։ Տուներնին մէկ յարկէն աւելի չեն բարձրացներ ընդհանրապէս, բայց բաժանմունքները շատ են. ընդերկայնութիւն ճակտի պատին վրայ շինուածները լցու կ'առնեն ներքին դաւթի մը վրայ նայող պատուհաններէ. տան գլխաւոր մասն է այն սրահը որ միանգամայն ուտելու և ընդունելութեան տեղ կ'ըլլայ՝ տանը ետեկ մասը ունի իր առանձին բաժանմունքները, որոց գոները մետաքսէ և կամքթանէ վարագոյրներ են։ Կահերնին շատ չէ, և ուրիշ Ասիացւոց ոճին վրայ միայն այս տարբերութեամբ որ Զինք աթոռ ալ ունին, անկողնի վրայ սաւան չեն փռեր, և սեղաննին ծածկոցվ չեն ծածկեր։

Գետերը և ջուրի անցքերը կրնայ ըստիլ որ ակօսաբեկ ըրած են Զինաց աշխարհը, այն պատճառաւ Զինք միշտ նաւակով կը ճանապարհորդեն, պէտք եղած տեղեր կառք ալ կը գործածեն, բայց միշտ միաձի. բայց նաւակով և կառքով երթալէն աւելի զուարճալի է Զինաց պատղարակով երթալը։ Ծովով ճամբորդութիւնները քիչ մը դանդաղ են՝ բայց հանգիստ։ Մանտարիներուն և հարուստներուն նաւակները

մանաւոր սենեակներ ունին ըստ ամենայնի կազմ և պատրաստած։ Մեծամեծ քաղաքաց բազմամարդութիւր կարդէ գուրս է. բնականապէս այսչափ բազմութեան մէջ կարգ մը պահելու համար բարեկարգ ոստիկանութիւն մը պէտք է. և այս ոստիկանութիւնը միակ մէկ սկզբան մը վրայ հաստատուած է, այսինքն պատասխանառութիւն։ Ամէն քաղաք տասը շրջանակ կը բաժնուի, և իւրաքանչիւրը տասը և հարիւր տուն մէկ ֆիա մը կ'ընէ, և տասը ֆիա մէկ բաօ մը կամ մէկ հարիւրեակ։ Ատենակալը պատասխանատու է բոլոր իր վիճակին, իսկ հարիւր և կամ տասը տանց գրլիսաւորները՝ իրենց սահմանին, և ամէն ազգատոհմի գլուխը իրենիններուն։ Փողոցներուն ծայրը արեւուն մտնելէն ետքը պատուարներ կը քաշուին, և պահապան զինուորները չեն թողուր որ մարդ դուրս ելլայ, բաց ՚ի կարի ստիպողական պատճառէ մը։ Հասարակաց տեղիք և փողոցները զինուորներով լցուն են, որոնք անդադար խարազանով մարդակոյտները կը ցրուեն։ Եւ ՚ի գովեստ ոստիկանութեան արթնութեանը այս միայն ըսենք որ Գանդոնի պէս աշխարհածաւալ քաղաքին մէջ, ուրամէն տեսակվաճառականաց և ճոխ և թանկագին վաճառուց հարստութիւնի կայ, հազիւերք գողութեան անունը կը լսուի։

Գիտութիւն և Հաշատք.

Միայնակ թափառական կը քալէի լերկ գաշտերու մէջ։ Զմեռն իր ցրտաշունչ քամիներովը բնութեան վրայէն կանաչ երևոյթը վերուցեր էր. ծառերը տերեւաթափ, ալ անոնց խշրոոցը չէր լսուեր. ամենայն ինչ տիսուր մունքներ կը զարթուցանէր սրտիս մէջ։ Բնութեան այս յետին թշուառու-

թեանը գաղտնիքը կը փնտուէի , և մեծ խոռվութիւն մը կը զգայի սրտիս մէջ , ընդէմ ամբարիշտ խորհրդոց բունութեան որոնք վրաս կը յարձըկէին :

Թարշամեալ բնութեան կը նմանէի , վասն զի մոտածմունքներս մարմնոյս կենսական զօրութիւնը կը նուազեցընէին :

Կենաց գաղտնիքը առջևս ելաւ : Կորացեալ ծերունի մը , տրտում տխուր՝ ճամբուն ծայրը փոթորկի բռնութենէն տապալած ծառի մը կոճղին վրայ նստերէր : Քամին՝ ճակտին վրայի ծիւնափայլ և գանդրացեալ մազերը կը տատանէր օդուն մէջ . երկու ցուրտ արցունիքի կաթիներ կորնճմտած երեսին խորշերուն մէջէն կը վազէին . և ձմերուան ամպապատ արեգակը՝ իւր խոտորնակ ճառագայթները ծերունւոյն գագաթան վրայ զարկեր էր :

Չորչուկ և նիհար ձեռքերուն մէկը արտեանանցը մօտեցուց , և երբ արցունքները չորնալու վրայ էին այտիցը վրայ , երկընցուց դէպ՚ի անոնց դիմացը իր մատուցներն , և ըսաւ . « Սիրտս սա դաշերուն նման անապատացեալ է , մթնոլորտին պէս մութ է , ծառերուն պէս մերկ , և սառի պէս ալ ցուրտ է , երբ սառը հանդարտ առուակները չարաչար կը պրկէ : Վասն զի քըննեցի սիրտս , և անաշառ համար պահանջեցի հողիէս՝ գործած ամենածածուկ շարժմունքներուն համար :

« Չորս կողմն կեցածներուն պատճառը փնտուեցի , այն անհասկանալի սկիզբը , ուսկից ամենայն ինչ առաջ եկեր է : Ըրած այս խուզարկութիւնս հայհոյանք մըն էր , ուստի անոր հետեանք պատիժն ալ կրելը անտանելի եղաւ :

« Հոգւոյս տուած ամէն պատասխաններուն , վայելած ուրախութեանցս մէկ մասը կը ցնդէր մորքէս . փնտուած պատճառներու . ամէն մէկ լուծմամբը , միսիթարիչ կրօնքը , և նեցուկ՝ թոյսը , սրտիս մէջ կը պաղէր :

« Աչքիս ամենայն ինչ պատրանք և խաբէութիւն երեցաւ , մինչև Աստուծոյ ծառայութիւնն անդամի :

» Երիտասարդութեան հաճոյական ցնորքները՝ ժամանակէն առաջ հեռացան ինծմէ . կախ յօնքերս աշացս տեսութիւնը մթագնեցին . ճակտիս վրայ երկու մեծամեծ խորշեր բացուեցան , և ցուրտ և տագնապեցուցիչ մոտածմունքները իմ բաժինս եղան :

» Կենաց ձմերուանը հասայ առանց ամառուան զովագին շուքը վայելելու , և ոչ իսկ աշնանային քաղցրահամ պրտուղները » :

Գիթութեամբ լեցուեցաւ սիրտս , և քաղցը և կարեկից ձայնով մը դարձայ ըսի ծերունւոյն .

» Հայրիկ , եթէ ծերութեան ամպերը կը ծանրանան վրադ , եթէ ճակատդ յերկիր կը խոնարհի , չես կրնար կակլացունել և միսիթարել քու քարացեալ սիրտդ՝ անցուցած լաւագոյն ժամանակացդ յիշատակներովը : Ապագայ կենաց յոյսը և երջանկութիւնը կարող չեն ուրեմն ամրացընելու և կենդանացընելու քու հոգիդ , որ այդպէս հեծութեամբ զքեզ օր աւուր գերեզմանի կը մօտեցնես » :

« Որդեակ իմ , ըսաւ ծերունին , գառն ժպիտ մը երեսին վրայ երեցընելով , դեռ դու չես ճանչնար թէ ինչ ըսել է մարդկային կեանքը : Ատենք ես ալ քեզի պէս կտրիճ երիտասարդ մ՚էի . իմ այտերուս վրայ ալ կը ծաղկէին այդ վարդերը , և բնութեան ամէն գեղեցկութիւնները իմ երեսիս կը ծիծաղէին . իմ աչքերս իրենց դիւթական և հրապուրիչ ու փոփոխական տեսքերը իրենց կը ձգէին . այն ատեն Արարչին գործոցը վրայ կը պանչանայի , վասն զի կը հաւատայի անոր : Այն ատեն գիտէի աղօթք ընել և իրեն շնորհակալ ըլլալ . սակայն մանկութեան օրերը անյան գնացին , ինչպէս արծարծեալ կրակ մը , որ ամառուան տաք զիշերուան մը մէջ կը բորբոքի կ'ընդարձակի , վեր կը բարձրանայ , վերջը կը շիջանի , և մէջ՝ մ'ալ չերենար : Այն ատեն կը կարծէի որ այս կեանքը ուրախութիւն կը պատճառէ այն մարդուն՝ որ ցաւերը և տըրտ մութիւնները արհամարհած մէկդի կը

թողու : Ուստի ուրախութք լեցուած ,
անկեղծ սրտով և ամենայն բանի
դիւրահաւան , մույ մարդկութեան
այս ընդարձակածաւալ ընկերութեան
մէջ :

Չեռքս սիրով ամէն ձեռք կը սխմէր ,
կը կարծէի որ սէրը ամենայն մարդ-
կանց սրտին խորը դրոշմուած է : Այս-
պէս կը հաւատայի , վասն զի առանձին
անոր գանձը ունէի յիս :

Օր մը թշուառութիւնը իր սոսկալի
բազուկները բերաւ տարածեց վրաս . ես
մէկէն վստահութեամբ լեցուն՝ բարե-
կամներս օգնութեան կանչեցի : Այն
ատեն իմացայ թէ որչափ նուազ է ե-
ղեր մարդկանց սրտի մէջ սէրը . վասն
զի ամէնքը , ամէնքը թողուցին զիս , և
յուսահատութեանս վրայ սկսան ծի-
ծաղիլ :

Տեսայ որ ամենքը ունեցածներէս
մէջմէկ մաս յափշտակած եղեր կ'եր-
թային : Միայն մէկը մնաց քովս : Զիս
խոռվող գժբաղդութեանցս և տառա-
պանացս մէջ , այտերուս վրայի դառ-
նահոս արցունքները անիկայ սրբեց , և
ինքն ալ ինծի հետ դառնութեան բա-
ժակը կը խմէր : Ո՞հ , ճշմարտիւ զինքը
սրտիս վրայ և սրտիս մէջը կը կրէի .
ի՞նչպէս երախտազէտ կը ճանչնայի իմ
սիրտս իրեն մարդասէր սրտին փոխա-
րէն :

Բայց մահը , նախանձող մահը , նետ
մը արձկեց դէպ 'ի անոր սիրտն ալ , և
բացգերեզմանը՝ անոր անշնչացեալ դիա-
կը յափշտակեց . և ցուրտ հողը ծած-
կեց այն անձն ալ որուն վրայ միայն
աշխարհիս երեսը սէր ձգէր էի
այս բաժանմունքը մշտնինաւոր էր :
Այն ժամանակ երջանկութիւնը՝ սիրոյ
մէջ սկսայ փնտուել : Աղքատութեամբ ,
ձեռքիս աշխատանքովը խաղաղութք-
կ'անցընէի օրերս , և շատ անգամ դառն
քրտինքներ բոցատապ ճակտիս վրայէն
կը վաղէին : Խանդակաթ ամուսին մը
և ցանկալի որդիքներ ունեցայ , և եր-
ջանկութիւնը ու ցնծութիւնը նորէն
սկսաւ ծնանիլ սրտիս մէջ : Իսկ Աստու-
ծոյ գալով , ամենեին չէի մտածեր :

Եւ ահա աստուածային բարկութե-
գաւազանը եկաւ իջաւ աշխարհքս . մա-
հուան սուր մանգաղը քալեց երկրիս
վրայ , և բոլոր սիրելագոյն անձինքներս՝
որոնց վրայ իմ կենացս երջանկութիւ-
նը կը կայանար , զամէնքն ալ հնձեց
պառկեցուց :

Կինս , ուստերքս և դստերքս , մէկիկ
մէկիկ զրկիս մեջ իրենց հոգին տուին :
Ամէնքն ալ ծնկերուս վրայ հոգւոյ և
մարմնոյ անբացատրելի նեղութիւննե-
րով մեռան . երբ որ անդրանիկ որդւոյս
աշուրները մժագնեցան , որուն հոգին
երկու անգամ շրթունքները հասեր էր ,
պաղատեցայ Աստուծոյ՝ շնորհելու անոր
կեանքը . բայց Աստուած շաեց պաղա-
տանացս . վասն զի զարհուրելի ցընց-
մունք մը որդւոյս անգամները կարկա-
մեցուց , և անոր չորցած մարմնէն զա-
նիկայ կենդանացնող հոգին բաժնեց
տարաւ : Յուսահատ ինկայ մնացի սի-
րելեացս սառնացեալ դիականցը մէջ :
Ցնորած միակերպ զանոնք կը կանչէի :
Բայց աւազ , մեռեալները չեն լսեր ա-
մենեին :

Այն ատեն դառնացեալ սրտով դիա-
կանց չորս կողմիր պատած ժանտալից
օղը կը կոծէի : Ի՞նչպէս քաղցը կ'երե-
նար ինծի յաւիտենական քուն մը . բայց
չկրցայ մեռնիլ . դեռ դառնութեան
բաժակին ինչուան մրուրը բոլորովին
չէր քամուած և բոլոր սէրս
այն դիականց հետ մուաւ գերեզմանին
մէջ : Անանցանելի պատնէշ մը եկաւ
բաժնեց որդիքը իրենց հօրմէն , և ես
միայն մնացի աշխարհիս վրայ : Այն ա-
տեն դարձուցի աչքս անցելոյն վրայ ,
և սկսայ հաշուել քաշած նեղութիւն-
ներս և վայելած հաճոյքներս : Եւ բուն
ճշմարիտ խնդութեանցս վայրկեաննե-
րը համեմատելով կրած տխուր ժամե-
րուս՝ մէկ առ հազար հազիւ կրնային
բաղդատուիլ :

Դարձայ առ Աստուած լի սրտմտու-
թք և հայհոյանօք , և ըսի . «Ուրեմն մի-
այն տանջանաց և արտասուած համար
ստեղծեր ես զմարդս : Ինչու չթողուցիր
որ անշունչ հողը քնանայ իր խաղա-

դութեանը մէջ, և բնութեան անդորր հանգիստը վրդովեցիր » :

Աստուած նորէն պատժեց զիս իմ ըրած հայհոյանացս համար . վասն զի սիրտս մէկէն պաղեցաւ, բոլորովին հեռացաւ ինձմէ հաւատքը . ալ անկէ վերջը ոչ կրցայ լալ և ոչ ցաւ մը զգալ : Այն ժամանակ մէկ աւաղելի անզգայութիւն մը եկաւ իր դժնդակ հարուածովը փակեց յաւիտեան իմ շրթունքներս, և կենացս բոլոր օրերը մշտնշնաւորապէս մթագնեցան և ամպոտեցան » :

Ասանկով ոտք ելաւ ծերունին, և սկսաւ ծանր ծանր հեռանալ ինձմէ : Իր ծանր ճակատը գետին կը խոնարհէր . տաժանմամբ և կորացեալ իր տըլսուր յիշատակներուն բեռան տակ ընկնուած՝ կը յառաջէր դիմացէս :

Ծերունւոյն այն զարհուրեցուցիչ կանխաձայնութիւնները, իմ սիրտս մթին խորհուրդներու մէջ ձգեցին : Ապառնւոյն սգալի թշուառութեան և ան մխիթարութեան տեսարանները դիմացըս պարզուեցան՝ որոնք դէպ ՚ի ինձի կը վազէին : Սակայն գեռ յոյս ունէի Աստուծոյ վրայ : Պաղատալից աչքերս երկինք վերուցի, և քաջալերութեան և ողորմութեան ճառագայթը վանեց ցըրըուեց սրտէս՝ վրաս յարձըկող թաղծագին մտածմունքները : Քայլերս դէպ ՚ի Աստուծոյ տաճարը ուղղեցի, վասն զի հոգիս մխիթարութեան կարօտութիւն կը զգար : Բայց դիպուածով խոտորեցան քայլերս գերեզմանոցին օձապտոյտ ճամբաներուն էջ, և հոն խորափոր գերեզմանի մը դիմացը նստայ, նեղ և կէս փտտած նստարանի մը վրըայ : Այդ գերեզմանին մէջ ծամածուռ գանկեր կային, և այն մեռեալ գանկերուն խոռոշացեալ խորչերը, հետաքըրքիր աչքերս իրենց գրաւեցին : Մէկէն ՚ի մէկ սարսափ մը եկաւ վրաս, և ցուրտ գող մը բոլոր մարմնոյս վրայ քալեց, վասն զի ձեռքիս նիշար և ոսկրոտ ուրիշ ձեռք մը դպաւ : Եւ ահա ծերունին ոտքի վրայ քովս կեցեր էր :

« Որդեակ իմ, ըսաւ, մատովը մերկ և սպիտակ գանկ մը ցուցընելով, կը

տեսնես սա զլուխը ատիկայ իմ հօրս զլուխն էր : Սոյն վայրկենիս արտասուաց հեղեղ մը և դառն հեծկը տանկը մը խօսքերը ընդհատեցին : Իսկ գանկը ծերունւոյն տրտմութեանը վրայ կարծես թէ հեգնութեամբ կը ծիծաղէր : Վերջը մատը աւելի պգտի գանկի մը դարձնելով ըսաւ . Սա ալ կը տեսնես . այդ ալ անդրանիկ որդւոյս զլուխն է . քեզի նման երիտասարդ մ'էր . բայց մահը զինքն ալ յափշտակեց տարաւ . միւսն ալ կնոջս գանկն է, որ այնպէս գեղեցիկ էր և քաղցը . . . սա ալ սիրական բարեկամիս գանկն է : Ահա բոլոր այս մերկ գանկերն են ուրոնց վրայ իմ յոյսս, իմ խաղաղութիւնս, իմ երջանկութիւնս կը կայանայ : Տես թէ ցաւոց պատճառած տագնապը՝ ինչպէս կեանքէն վերջն ալ կը տեէ : Այս ոսկերոտեացս մէջ քեզի համար ալ, որդեակ իմ, տեղ մը կայ . պիտի գայ ժամանակ մ'ալ յորում քուաչքերդ ալ ասոնց նման ահարկու պիտի ըլլան, և երկնից անձրեները քուգանկդ ալ պիտի սպիտակցընեն և կարմրացընեն » :

Երբ ես սրտնեղութեամբ լեցուած կ'ուզէի մէկդի ձգել ծերունւոյն ըսածները իբրև անտանելի և դժնդակ մտածութիւններ, ինքը պատասխանի կը սպասէր :

Սոյն միջոցիս տժգոյն դիմօք կին մը կամացուկ մը դիմացնիս ելաւ : Իր արտասուացը տակ անոյշ խնսում մը ունէր, այնպէս խաբող՝ ինչպէս թէ ինքն Յոյսը ըլլար : Փափուկ մատուըներէն ծաղկանց պսակներ կախուած էին . իսկ ինքը սգազգեց քօղով մը ծածկուած էր : Ծնկան վրայ եկաւ նորափոր գերեզմանի մը քովը, և ձեռքի ծաղկըները գետնին վրայ տարածեց :

Ծերունին նորէն ցուցուց ինձի գանկերը, և ըսաւ . « Որդեակ իմ, ճանչցամբ հիմա մարդկային կեանքը : Հասկըցամբ որ ամէն բանի գաղտնիքը ոչինչն է » : « Մի հաւատար, որդեակ իմ, գոչեց անդիէն կինը արտասուալից աչքերով, ատոր մի հաւատար » :

Այս ըսելով, աչքերը երկինք վերցուց, և իբրև Աստուծմէ լուսաւորեալ մարդարէ մը գոչեց. « Այս է ահա ամէն գաղտնեաց վերջին լուծումը, կենաց և մահու, երջանկութեան և թշուառութեան . . . ինծի ալ, Աստուծոյ բարկութե գաւաղանը ինծի ալ հասաւ. ես ալ լծակցէս և մէկորդիս զրկուեցայ. Այս ցուրտ հողը նոյնպէս իմ սիրելեացս դիակոնքն ալ ծածկեց : Բայց սակայն գտայ ես իմ միխթարութիւնս այն յափտենական գաղտնի բառին մէջ, է Աստուած » : — Այն վայրկենէն զիս տագնապող յուսահատութեան ցնողքները անհետացան վրայէս : Երախստագէտ սրտով համբուրեցի կնոջ ձեռքքը՝ որ մը խիթարութեանս և լուսաւորութեանս պատճառ եղաւ, և սիրտս յուսահատ ծերունոյն դէմ զայրոյթ մը զգաց : Դարձայ արհամարհանօք ծերունոյն անունը հարցուցի. պատասխան տուաւ ծերը. Ես Գիտուրիշն կը կոչուիմ: Դարձայ կնոջ անունն ալ հարցուցի, և իմացայ թէ Հարատք էր անոր անունը : Յետոյ իւր վերարկուաւը ծածկեց զիս Հարատքը, և անկէ վերջը յուսահատութե խորհուրդները չմօտեցան ինծի այդ սուրբ վահանին հովանոյն տակ. Ուստի անկէ ետև հանգստութիւնը, երջանկութիւնը և խաղաղութիւնը իմ բաժինս եղան :

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Դուռը հրեայ կանանց գիրուրիւնը : — Տաճկաբնակ երկիրներու մէջ գիրութիւնը գեղեցկութեան անհրաժեշտ մասը կը սեպուի, և այն աղջիկները որ զանց կ'ընեն այս առանց որոյ ոչ պայմանս՝ շատ դժուարաւ կրնան է.

րիկ մը գտնալ: Դունուզի Հրեայք ալ մըս լիմանայ սովորութիւններուն մեծ մասըն ընդունած են, և թերես գիրութե կողմանէ իրենցմէ աւելի նախանձաւոր ըլլան: Երբոր աղջիկ մը հարսնացու կ'ըլլայ, սովորութիւն է որ հարսնիքէն քառասուն օր առաջ կը գիրացնեն զինքը. Թող չեն տար որ գուրս ելլէ, այլ կը փակեն մուլթ և զով սենեկի մը մէջ, շատ կը խմբընեն և երկայն ատեն կը քնացնեն. կէս գիշերուն մայրը կ'արթնցնէ զինքը և գորսգուստու ու մանեղէն գնտակներ կը կերցնէ, որոնք շինուած են իւղային բուսոց հատիկներէ, նման իւրապա սագերուն կերածին: Թէ որ քառասուն օրէն ետքը նշանուածը նիհար գտնէ զինքը, ծնողքը տասնուհինդ օր ալ կը շարունակեն նոյն ոճը, խեղճ աղջիկը մեռցնելու վտանգաւ: Այս կերպով եղած գիրութիւնը չկորսուիր, կ'ըսեն Սրաբացիք:

Կանայք սրունկնին և թեսերնին ու կիէ կամ արծաթէ մեծամեծ օղակներ կը կրեն. Եթէ նշանուած օրիորդը այրի կամ ամուսնէն բաժնուած մարդու մը պիտի տրուի, իրեն կ'անցընեն առաջին կնկան օղակները և այնպէս կը բաեն որ ապարանչաններուն մեծութիւնը լեցընելու չափ հաստընան թեսերն ու սըրունկները: Դիւրին բան չէ այս գործողութիւնս, որովհետև շատ անգամ վրտիտ կին մը բոլորովին տարբեր կազմուած ունեցող կնկան կը յաջորդէ. Կ'ըսուի ալ որ կնիկներէն ոմանք այս փափաքելի գիրութեան հասնելու համար շան լակոտներ կ'ուտեն, որ ամենազօրաւոր միջոց կը սեպուի. ուրիշները միայն սօսամն կ'ուտեն, քսանը չորս ժամուան վրայ քսանուիրեք ժամ կը քնանան, և ջանալով ջանալով՝ ամենէն աւելի ըմբոստ բնութեան ալ կը յաղթեն :